

# Ուղղանկյուն-2

Արմենը պետք է կոորդինատային հարթության վրա նշի չորս այնպիսի կետեր, որոնք կազմեն ուղղանկյուն (ուղղանկյան կողմերը կարող են զուգահեռ չլինել կոորդինատային առանցքներին): Արմենը արդեն գտել է երեք կետ և դա արել է առանց սխալվելու: Օգնեք նրան գտնել չորրորդ կետը:

## Մուտքային տվյալներ

Մուտքի երեք տողերում գրված են Արմենի ընտրած կետերի կոորդինատները (կետերի կոորդինատները ամբողջ թվեր են և բացարձակ արժեքով չեն գերազանցում 1000-ը):

## Ելքային տվյալներ

Պետք է արտածել չորրորդ կետի կոորդինատները:

## Օրինակներ

N°	stdin	stdout
1	0 3 0 0 5 0	5 3
2	1 4 8 3 7 6	2 1